



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

18.04.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-110/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2016թ. թիվ 1/73-3/10776-16 և 02.04.2016թ. թիվ 1/73-3/11246-16 գրություններով ներկայացված «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-110/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-110/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 13.04.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի երեխաների խնամքի պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի 15.03.2016թ. թիվ 2գհ39/16

«Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 17.03.2016թ. թիվ Ա18 գրությունների հիման վրա, 29.03.2016թ. թիվ 1/73-3/10776-16 և 02.04.2016թ. թիվ 1/73-3/11246-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Եվա և Սյուզի» ՍՊԸ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, կարծիք ստանալու նպատակով, 02.04.2016թ. թիվ 01/04.1/1306-16 և 05.04.2016թ. թիվ 01/04.1/1357-16 գրություններով դիմել է «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի վերը նշված գրությունների՝ Ընկերությունը հայտնել է, որ չգրանցված աշխատողի համար նշանակվել է ակտ, որը պետք է վճարվեր մինչև հաջորդ ամսվա 1-ը: Ընկերությունը թիվ 5103185 ակտը վճարել է 01.03.2016թ., սակայն Կենտրոնական գանձապետարանում վճարումը գրանցվել է 02.03.2016թ., այսինքն վճարումը հաշվին փոխանցվել է 1 օր ուշացումով, որի պատճառով առաջացել է տույժ՝ օրվա համար 27 դրամի չափով, որը հանգեցրել է պարտքի:

Ընկերությունը Կենտրոնին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Նոր-Նորքի հարկային տեսչության կողմից 30.03.2017թ. տրված թիվ 2280 տեղեկանքի համաձայն որի «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն 03.03.2016թ. դրությամբ (հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 29.12.2016թ. ժամը 15:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-110/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ,

ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 15.03.2016թ. թիվ 2գհ39/16 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «2ԳՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/2» ծածկարգով ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 03.03.2016թ.:

ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: 10.03.2016թ. ստացվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

Պատվիրատու 1-ը, պատշաճ ծանուցված լինելով 29.12.2016թ. ժամը 15:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-110/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. «Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև Պատվիրատու 2) 17.03.2016թ. թիվ Ա18 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատու 2-ը «ՄՀԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.02.2016թ. թիվ 1 որոշմամբ ուղարկվել է հրավեր շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին և հրապարակվել հրավերը www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Վերոհիշյալ ընթացակարգի շրջանակներում 10.03.2016թ. հարցում է ներկայացվել հարցում է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն առաջին և երկրորդ տնիզ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշների համապատասխանության վերաբերյալ:

Հարցման արդյունքում պարզվել է, որ «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 27 ՀՀ դրամ գումարի չափով հարկային պարտավորություն:

Պատվիրատու 2-ը, պատշաճ ծանուցված լինելով 29.12.2016թ. ժամը 15:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-110/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. ՍՑ-ԳԲԽ-110/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 13.04.2017թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2016թ. թիվ 1/73-3/10776-16 և 02.04.2016թ. թիվ 1/73-3/11246-16 գրություններով

ներկայացված «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01011426) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

6. ՍՑ-ԳԲԽ-110/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2016թ. թիվ 1/73-3/10776-16 և 02.04.2016թ. թիվ 1/73-3/11246-16 գրություններով ներկայացված «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «2ԳՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/2» ծածկագրով ընթացակարգ

1. «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «2ԳՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/2» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն **03.03.2016թ.** հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

3. Պատվիրատու 1-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 03.03.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի վերաբերյալ:

4. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին 10.03.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն **հայրը ներկայացնելու օրվա (03.03.2016թ.) դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 18 054 ՀՀ դրամի չափով:**

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.03.2016թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի հայտը մերժել:

2. «Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՄՀԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-1» ծածկագրով ընթացակարգ

6. «Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ՄՀԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն **03.03.2016թ.** հայտ է ներկայացրել:

7. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայրը ներկայացվելու օրվա (03.03.2016թ.) դրությամբ չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

8. Պատվիրատու 2-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 10.03.2016թ.

կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի վերաբերյալ:

9. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին 14.03.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն **հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (03.03.2016թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 27 ՀՀ դրամի չափով:**

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.03.2016թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի հայտը մերժել:

3. ՀՀ ֆինանսների նախարարության օպերատիվ հետախուզության վարչության կողմից 24.02.2016թ. կազմված թիվ 5103185 ակտի համաձայն՝ «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն պարտավորվել էր վճարել 162 000, 105 000 և 63 000 ՀՀ դրամի չափով տուգանք:

4. Համաձայն «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնին ներկայացված վճարման հանձնարարականների՝ Ընկերության կողմից 01.03.2016թ. կատարվել է 105 000, 162 000 և 63 000 ՀՀ դրամի չափով վճարումներ վերոհիշյալ ակտով սահմանված հաշվեհամարներին:

5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Նոր-Նորքի հարկային տեսչության կողմից 30.03.2017թ. տրված թիվ 2280 տեղեկանքի համաձայն՝ **«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն 03.03.2016թ. դրությամբ (հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

7. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի 15.03.2016թ. թիվ 2գհ39/16 «Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 17.03.2016թ. թիվ Ա18 գրությունները և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակից ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն *(հղումը կատարված մինչև ՀՀ կառավարության 07.07.2016թ. N 700-Ն որոշումը ուժի մեջ մտնելը)* հարցում ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրության ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային

եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն **03.03.2016թ.** մասնակցության հայտեր է ներկայացրել «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «2ԳՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/2» ծածկագրով «Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՄՀԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-1» ծածկագրով ընթացակարգերին:

Ընկերությունը Ընթացակարգերի մասնակցության հայտերի N 2 հավելվածում Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտերը ներկայացվելու օրերի դրությամբ չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «2ԳՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 10.03.2016թ. տրամադրված եզրակացության համաձայն Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա (03.03.2016թ.) դրությամբ ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն՝ **18 054 ՀՀ դրամի չափով**, իսկ «ՄՀԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 14.03.2016թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու նույն օրվա (03.03.2016թ.) դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **27 ՀՀ դրամի չափով:**

Ընկերության պնդմամբ՝ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտքի առկայությունը հետևանք է եղել ՀՀ ֆինանսների նախարարության օպերատիվ հետախուզության վարչության կողմից 24.02.2016թ. կազմված թիվ 5103185 ստուգման ակտով նախատեսված վճարման ենթակա տուգանքի՝ ՀՀ կենտրոնական գանձապետարանի հաշվեհամարին 02.03.2016թ. փոխանցվելը, այնինչ Ընկերության կողմից նշված վճարումը կատարվել է 01.03.2016թ., որոնք հավաստվում են համապատասխան վճարման հանձնարարականներով:

Մինևույն ժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Նոր-Նորքի հարկային տեսչության կողմից 30.03.2017թ. տրված թիվ 2280 տեղեկանքը, ***համաձայն որի «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն 03.03.2016թ. դրությամբ (հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Նոր-Նորքի հարկային տեսչության կողմից 30.03.2017թ. տրված թիվ 2280 տեղեկանքը՝ ***համաձայն որի «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն 03.03.2016թ. դրությամբ (հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,*** Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց


ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2016թ. թիվ 1/73-3/10776-16 և 02.04.2016թ. թիվ 1/73-3/11246-16 գրություններով նախաձեռնված «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01011426) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:


ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝



Մարտիրոսյան Հարություն



Գրիգորյան Դիանա